

ջանար Նոր բարոյագիտութիւն մը, որ պիտի կոչուէր՝ ընկերա-քաղաքական բարոյագիտութիւն (Social-Political Ethics):

Այս շրջանին, մեծ հռչակ կը վայելէ ամերիկացի փիլիսոփայ **Ջ. Ռաուլսի** (John Rawls, 1921 – 2002 թ.) 1971 թուականին հրապարակած «Արդարութեան տեսութիւն մը» (անգլ. բնագիր՝ „A Theory of Justice”) գիրքը՝ ընկերաքաղաքական մարզէն ներս: Արդարութեան ձօնուած այս տեսութիւնը, իրականութեան մէջ հիմնուած է Կանտի բարոյագիտութեան վրայ: Այսինքն հեղինակը կը փորձէ ընկերութեան մէջ գոյութիւն ունեցող արդարութեան մեծ պահանջը յայտնաբերել: Բարոյագիտական նաեւ այս տեսութիւնը կ'առնչուի *Գերագոյն Բարիին*, ուր մշակուած չափանիշները պետք է ի գործ ուղլային ընդհանուրին համար եւ ամենուրեք՝ որեւէ ընկերութեան մէջ: Այլ խօսքով, Ջ. Ռաուլսի մշակած բացարձակ իրաւունքի ցուցակը իւրաքանչիւր անհատի սեփական իրաւունքը կը դառնար:

4. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Վերլուծական փիլիսոփայութեան ոլորտի մէջ կը զարգանայ *վերլուծական բարոյագիտութիւն* (Analytic Ethics) մը, որ սկզբնական շրջանին սերտօրէն առնչուած էր փորձապաշտութեան (Empiricism) եւ օգտապաշտութեան (Utilitarianism) ուղղութիւններուն: Այնուհետեւ, փոփոխութեան կ'ենթարկուի եւ Նոր բարոյագէտները, այսօր, վերլուծական միջոցներով քննարկութեան նիւթ կը դարձնեն բարոյագիտական որեւէ հարց:

Վերլուծական բարոյագիտութեան, ներկայացուցիչներ կը նկատուին, գրեթէ բոլոր օգտապաշտութեան հետեւորդ բարոյագէտները, ինչպէս նաեւ՝

- **Ա. Ջ. Այէր** (Alfred Jules Ayer, 1910 – 1989 թ.). բրիտանացի բարոյագէտ-փիլիսոփայն նաեւ իր իւրայատուկ տեղը ունի մեթա-բարոյագիտութեան ոլորտին մէջ եւ
- **Ջ. Լ. Մաքի** (John Leslie Mackie, 1917 – 1981 թ.). աստրալիացի բարոյագէտ-փիլիսոփայն, որ պայմանագրային տեսութեան (Contractarianism) գլխաւոր ներկայացուցիչներէն կը նկատուի: Ան, որոշ չափով, հետեւեցաւ Հյումի բարոյագիտութեան ու զարգացուց զայն՝ վերլուծական փիլիսոփայութեան միջոցներով:

5. ՔՆՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Նոր Դարաշրջանի բարոյագիտութեան հիմնական հարցերէն կը նկատուի՝ մարդկային *ազատ կամքի* (Free Will) դերը բարոյական վարմունքին մէջ: Այս իմաստով կամքի ազատութեան հարցը շրջանցելու փորձեր եղան: Այս հարցի լուծման կարելիութիւն մը կը նկատուէր՝ բարոյական լուրջ բանավեճերու հրապարակային քննախօսութիւնը (քննարկումը եւ խօսուիքը), միշտ նպատակ ունենալով ապահովել Նոյն այդ ընկերութեան անդամներու մեծամասնութեան հաւանութիւնը: